## Խմելու ջրից օգտվելու իրավունքը

Ջուրն անհրաժեշտություն է մարդու կյանքում: Այն չափազանց կարեւոր է առողջության եւ գոյատեւման, սննդի արտադրության եւ տնտեսական գործունեության համար: Մինչդեռ այժմ մենք կանգնած ենք գլոբալ ճգնաժամի առջեւ: Միջազգային ասպարեզում բազմիցս է քննարկվել, որ խմելու ջրից օգտվելու հնարավորությունը մարդու իրավունքների ցուցակում ներառելը ամենակարեւոր քայլը կարող է հանդիսանալ մարդկանց համար կյանքի այդ ամենահիմնական տարրը մատչելի դարձնելու գործընթացում:

Որպես մարդու իրավունք՝ խմելու ջրից օգտվելու հնարավորության մասին քննարկումներում կրկին ու կրկին շոշափվել է այն փաստը, որ ջուրն անհրաժեշտ նախապայման է մեր բոլոր մյուս իրավունքների համար: Աներկբա է, որ առանց խմելու ջրի անհրաժեշտ մինիմումից օգտվելու հավասար հնարավորության, մյուս հաստատված իրավունքները, ինչպես, օրինակ՝ առողջության ու բարեկեցության չափանիշներին համապատասխան կենսամակարդակի, ինչպես նաեւ քաղաքացիական ու քաղաքական իրավունքների հասանելիությունը դառնում է անհնարին: Տարածված է այն կարծիքը, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի հիման վրա կազմվել են հետագա հռչակագրերը, չէր կարող իր մեջ ներառել ամեն ինչ: Այն ավելի շուտ պետք է ընդգրկեր որոշակի կենսամակարդակի հիմնական տարրեր: Ջրի անտեսման պատճառը նրա բնույթն է եղել. ինչպես օդը, այն համարվել է բացարձակ անհրաժեշտություն ու հարկ չի համարվել անդրադառնալ դրան:

Շատ քաղաքագետներ եւ քարոզիչներ կոչ են արել խմելու ջրից օգտվելու հնարավորությունն ընդգրկել մարդու իրավունքների շարքում որպես շատ կարեւոր քայլ, ի հաստատումն ձեռնարկած միջոցառումների բոլոր նրանց կողմից, ովքեր զրկված են խմելու ջրից օգտվելու հնարավորությունից: Նրանք գտնում են, որ հարցի նման օրինականացումը կդրդի թե՛ զարգացող, եւ թե՛ դոնոր պետությունների կառավարություններին արդյունավետ փոփոխություններ մտցնել ներքին եւ աջակցման քաղաքականության ու ռեսուրսների բաշխման մեջ, ինչպես նաեւ ավելի ամուր հիմքեր կտա քաղաքացիական խմբերին կառավարությունների վրա ազդելու համար: Դեռ ավելին, ողջ աշխարհում խմելու ջրի պաշարի մատակարարման եւ ծառայությունների սեփականաշնորհման քննադատները գտնում են, որ խմելու ջրից օգտվելու հնարավորության օրինականացումը կամրացնի իրենց փաստարկները՝ հօգուտ հասարակական սեկտորի, եւ ոչ թե ընկերությունների, որոնց գլխավոր նպատակը հնարավորինս շատ շահույթ ստանալն է:

**Թերեւս ջուրը միակ բնական պաշարն է, որն առնչվում է մարդկային զարգացման բոլոր ասպեկտներին՝ գյուղատնտեսական եւ արդյունաբերական զարգացումից մինչեւ հասարակության մեջ ամրագրված մշակութային եւ կրոնական արժեքները:**

*Կոիչիրո Մացուուրա*
*ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրեն*

## Քաղցրահամ ջրի միջազգային տարի
## Ի՞նչ է հարկավոր անել

Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու, այն է՝ մինչեւ 2015թ. անվտանգ խմելու ջրի մատչելիությունից զրկված մարդկանց թիվը կիսով չափ կրճատելու, ինչպես նաեւ բարվոք սանիտարական պայմաններից օգտվելու հնարավորությունից զուրկ մարդկանց թիվը կիսով չափ նվազեցնելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել հետեւյալը.

- Մինչեւ 2015թ. համապատասխան ջրային ենթակառույցներից եւ ծառայություններից օգտվելու կարիք ունեցող մարդկանց թիվը կավելանա եւս 1.6 միլիարդով:
- Մինչեւ 2015թ. բարվոք սանիտարական համակարգերի եւ հիգիենայի մասին տեղեկատվության կարիք ունեցող մարդկանց թիվը կավելանա 2 միլիարդով:

Անվտանգ ջրի պաշարի եւ սանիտարական պայմանների կարիք ունեցող մարդկանց պահանջը բավարարելու համար անհրաժեշտ ներդրման չափը կհասնի տարեկան մոտ 20 միլիարդ դոլարի՝ ի տարբերություն ներկայումս անհրաժեշտ 10 միլիարդի:

Ջրին առնչվող ամեն տեսակ ենթակառույցներում անհրաժեշտ կլինեն 180 միլիարդ դոլար կազմող գլոբալ ներդրումներ՝ ի տարբերություն ներկայումս ներդրվող 70-80 միլիարդ դոլարի:

**ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակ**
**Հանրային տեղեկատվության**
**վարչություն**
**Երեւան, ՀՀ**

**Հեռ. 56-02-12, 58-00-32**
**Հեռ./ֆաքս. 56-14-06**
**Էլ. փոստ. dpi@undpi.am**
**UNO/DPI Yerevan/048**

*Ձեւավորումը եւ տպագրությունը՝ ԼԻՄՈՒՇ ՍՊԸ*

# Քաղցրահամ ջրի միջազգային տարի





2003

**Զարգացող աշխարհում որեւէ միջոց այնպես չի նպաստի հիվանդությունների նվազեցմանն ու մարդկանց կյանքը փրկելուն, ինչպես բոլորին անվտանգ ջրով - համապատասխան սանիտարական պայմաններով ապահովելը:**

*Քոֆի Անան*
*ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար*

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան թիվ 55/196 բանաձեւով 2003թ. հայտարարել է Քաղցրահամ ջրի միջազգային տարի: 2000թ. դեկտեմբերի 20-ին ընդունված այս բանաձեւի նախաձեռնողը Տաջիկստանի կառավարությունն էր, որին աջակցեցին 147 երկրներ: Բանաձեւը հորդորում է կառավարություններին, ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններին եւ բոլոր գործող ուժերին օգտվել Քաղցրահամ ջրի միջազգային տարվա մատեհ առիթից եւ բարձրացնել իրազեկությունը քաղցրահամ ջրի կայուն օգտագործման, կառավարման եւ պաշտպանության կարեւորության մասին: Այն նաեւ կոչ է անում կառավարություններին, ազգային եւ միջազգային կազմակերպություններին, ինչպես նաեւ մասնավոր սեկտորին կամավոր ներդրումներ անել եւ ամեն կերպ աջակցել տարվա միջոցառումներին:

Քաղցրահամ ջրի միջազգային տարին հնարավորություն է տալիս արագացնել ջրային պաշարների ինտեգրացված կառավարման սկզբունքների կենսագործումը: Տարին լավագույն առիթ կդառնա խթանելու միջազգային, տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում իրականացվող միջոցառումները եւ ձեռնարկելու բազում նոր նախաձեռնություններ: Ակնկալվում է, որ Քաղցրահամ ջրի միջազգային տարին կհանդիսանա Կայուն զարգացման համաշխարհային վեհաժողովի արդյունքում ընդունված համաձայնագրերի կրողը, եւ 2003թ. հետո էլ զգալի կլինի նրա ազդեցությունը:

## ՄԱԿ-ի որոշումը

2002թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների կոմիտեն հաստատեց անձնական եւ ընտանեկան կարիքների համար մաքուր ջրի համապատասխան քանակից օգտվելու հնարավորությունը որպես մարդու համամարդկային իրավունք: Խմելու ջրից օգտվելու իրավունքը անհրաժեշտ է մարդուն արժանապատիվ կյանք վարելու համար: Այն նաեւ անհրաժեշտ նախապայման է մարդու մյուս իրավունքների իրագործման համար:

*Միջազգային համաձայնագիրը ստորագրել է 146 պետություն*

# 2003. Քաղցրահամ ջրի միջազգային տարի

Աշխարհի բնակչության մոտ 1/6-ը՝ 1,1 մլրդ մարդ, զրկված է անվտանգ ջրից օգտվելու հնարավորությունից, իսկ 40%-ը կամ 2,4 մլրդ մարդ զրկված է համապատասխան սանիտարական պայմաններից, որը եւ ջրի միջոցով փոխանցվող վարակների պատճառ է դառնում:



Ամեն օր մոտ 6000 երեխա է մահանում վտանգավոր ջրի, վատ սանիտարական պայմանների ու հիգիենայի հետ կապված հիվանդություններից, որը հավասարազոր է օրական 20 համաճարակային բռնկման:



Զարգացող աշխարհում բոլոր հիվանդությունների մոտ 80%-ը առաջանում է վտանգավոր ջրից եւ սանիտարական պայմաններից:



Սանիտարական պայմաններից առավելապես տուժում են կանայք եւ աղջիկները:



Արեւմուտքում զուգարանի ջուրը մեկ անգամ մղելու համար օգտագործվում է այնքան ջուր, որքան զարգացող աշխարհում միջին տարիքի անձն ամբողջ օրվա ընթացքում օգտագործում է լվացվելու, խմելու, մաքրության եւ կերակուր պատրաստելու համար:

Նախորդ դարի ընթացքում բնակչության ջրօգտագործումը աճել է կրկնակի: Միջին Արեւելքը, Հյուսիսային Աֆրիկան եւ Հարավային Ասիան մշտապես զրկված են ջրից:



Զարգացող երկրներում կոյուղու ջրերի մոտ 90%-ը բաց է թողնվում առանց մշակման:



Խմելու եւ ոռոգման համար ստորգետնյա ջրերի չարաշահումը շատ շրջաններում ջրի մակարդակի՝ տասնյակ մետրերով իջեցման պատճառ է դառնում՝ հարկադրելով մարդկանց խմելու համար ցածր որակի ջուր օգտագործել:



Զարգացող երկրներում հոսքային վատնումների, ապօրինի միացումների եւ թափոնների հետեւանքով կորստյան է մատնվում խմելու ջրի մոտ 50%-ը, ոռոգման ջրի՝ 60%-ը:



1990-ականների ընթացքում բնական աղետներից տուժած մարդկանց ավելի քան 75%-ը տուժել է ջրհեղեղներից, որոնց հասցրած վնասը բնական աղետների պատճառած ընդհանուր վնասի ավելի քան 33%-ն է կազմում: